ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ ‘ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ’ ԽՈՐԱԳՐՈՎ ԴԱՍԸՆԹԱՑ

09.02.2015 16:36

ՀՀ փաստաբանական դպրոցը և ՄԱԿ ՓԳՀ-ի հայաստանյան ներկայացուցչությունը հայտարարում են «Փախստականների իրավունք» դասընթացի մեկնարկը՝ նախատեսված ՀՀ փաստաբանական դպրոցի ունկնդիրների և ՀՀ փաստաբանների համար:

Դասընթացը բաղկացած է թեմատիկ 7 (յոթ) դասերից, որոնք տեղի կունենան 2015 թվականի մարտ-նոյեմբեր ամիսներին:

Դասընթացի մասնակցության ժամերը հաշվարկվելու են որպես պարտադիր վերապատրաստման ժամեր:

Մասնակիցների անգլերենի իմացությունը ցանկալի է:

Դասընթացի մասնակցության համար գրանցվելու վերջնաժամ¬կետն է 2015 թվականի փետրվարի 16-ը:

Տեղերը սահմանափակ են: Նախապատվությունը կտրվի առաջին 20 (քսան) մասնակիցներին:

Բոլոր դասերին մասնակցությունը պարտադիր է:

Դասընթացի ավարտին մասնակիցներին կտրվի հավաստագիր:

Գրանցվելու և այլ հարցերի համար անհրաժեշտ է ուղարկել հաղորդագրություն deputy.director@advschool.am կամ artak.lawyer@yahoo.com էլեկտրոնային հասցեին:

Հ.Գ.Հաշվի առնելով նախորդ տարվա փորձը՝ խնդրում ենք դասընթացին գրանցվեն այն անձինք, ովքեր իսկապես հետաքրքված են դասընթացի թեմայով և ցանկանում են հաճախել թեմատիկ բոլոր դասերին:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })